ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1915Թ. ՀՈՒԼԻՍՅԱՆ ԳԱՂԹԻ ՕՐԵՐԻՆ

1915թ. ապրիլյան ինքնապաշտպանության և ռուսական բանակի հաղթարշավի շնորհիվ վասպուրականահայությունն ազատվեց ամբողջ արևմտահայության համար թուրքական ռեժիմի կանխորոշած ցեղասպանության ծրագրից: Ավելին, ինքնապաշտպանության կազմակերպիչներից և ղեկավարներից մեկի՝ Արամ Մանուկյանի գլխավորությամբ ստեղծվեց Վան-Վասպուրականի հայկական նահանգապետություն, որի 70-օրյա գոյության ընթացքում արձանագրվեցին նշանակալի նվաճումներ: Կարծես թե իրականության շավիղի մեջ էր դրվում հայրենիքի ազատությունը վերականգնելու հայոց բազմադարյա ձգտումը: Սակայն իրադարձությունները զարգացան միանգամայն այլ կերպ: Վերադասավորելով ուժերը թուրքական զորքերը 1915թ. հուլիսի սկզբներին հակահարձակման անցան կովկասյան ռուսական բանակի IV կորպուսի դեմ, որի առաջավոր զորամասերը հարձակողական հաջող գործողությունների շնորհիվ գտնվում էին Մուշի և Բիթլիսի մատույցներում: Ստեղծված նոր իրավիճակում այդ, ինչպես նաև Վանա լճի շրջակայքում գործող ռուսական մյուս զորամասերը և նրանց օժանդակող հայկական կամավորական գնդերը 1915թ. հուլիսի 11-ին հրաման ստացան նահանջել զբաղեցրած տարածքներից[1]: Թուրքական յաթաղանից փրկված Վասպուրականի և հարակից բնակավայրերի ավելի քան 200 հազար հայության համար, որոնք ոգեշնչված էին ռուսական բանակի գալստյամբ[2], և որոնց մտքով իսկ չէր անցնում, որ այն կարող է ընկրկել թուրքական բանակի առջև, ստեղծվում էր սպառնալից կացություն:

Դեպքերի այդօրինակ զարգացումը հուզմունք և տագնապ էր առաջացրել հայ գործիչների շրջանում:

---

[1] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 102, թ. 46:

[2] Մ. Կարապետյան, Հայոց 1915-1916 թվականների ցեղասպանության հարցերը հայ պատմագրության մեջ. Երևան, 1998, էջ 311:

Նահանջի և դրանով թելադրված Վասպուրականի գավառների հայությանն գաղթի լուրը Վան էր հասել հուլիսի 13-ին և հոգեկան խռովքի մատնել նահանգապետ Արամին: Արճեշի և Ալջավազի պարետներից տեղեկանալով այդ գավառները գաղթեցնելու նրանց մտադրությանը՝ Արամը, այդ բանի համար չտեսնելով լուրջ հիմքեր և, անշուշտ, ելնելով որոշ զորահրամանատարների (Աբացիև, Նիկոլաև) կողմից երբեմն իրականացվող հակահայկական քայլերից կարծիք էր հայտնում, թե դա խաղ է և արվում է գավառներն. ու Վանը հայազրկելու նպատակով[3]:
Արամը եզակի չէր, հուզմունքի մեջ էին շատերը: Մասնավորապես, Անդրանիկը նահանջի հրամանը համարում էր Հայաստանը հայաթափելու նպատակով կատարվող, իր հետևանքներով հայության համար կործանարար քայլ[4]:
Նրանց տագնապն ուներ որոշակի հիմքեր:

Բանն այն է, որ ցարական իշխանություններին անհանգստացնում էր հայոց ազատասիրական ձգտումը, այն հանգամանքը, որ վերջիններս Վանը դիտում էին հայկական ինքնավարության հիմք և որպես դրա դրսևորման փաստ ճանաչում Արամի նշանակումը Վասպուրականի կառավարիչ[5]: Հայոց ստեղծարար ոգին, որը պարզորեն ի հայտ եկավ Արամի կարճատև նահանգապետության օրով, ևս ցարիզմի սրտովը չէր, նրա որոշակի շրջաններ թշնամաբար էին տրամադրված հայության հանդեպ:

Դեռևս 1915թ. ապրիլին ցարական իշխանությունները ծրագրում էին հայկական նահանգները գրավելուց հետո Թուրքիայի հետ ունենալիք նոր սահմանի երկայնքով ստեղծել կազակական բնակավայրեր՝ անթույլատրելի դիտելով այդ տարածքների զբաղեցումը հայերի կողմից[6]: Առհասարակ, այդ ժամանակաշրջանում խստորեն վատթարացել էր ռուսական բանակի հրամանատարական կազմի որոշ ներկայացուցիչների վերաբերմունքը դեպի հայությունը, ինչը և դրդել էր Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին

---

[3] ՀՀ ՀՔԿՓՊԿԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 280, թ. 4: Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947, էջ 352:
[4] Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, Երևան, 1996, հ. 1, էջ 464-465:
[5] ՀՀ ՀՔԿՓՊԿԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 280, թ. 53: Թերզիբաշեան Ա., էջ 220:
[6] Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 321-323:

դրությունը շտկելու ակնկալիքով 1915թ. հունիսի 7-ին դիմել Կովկասի փոխարքային[7]:

Արամի դիրքորոշումը տվյալ իրավիճակում միանշանակ էր և իրատեսական: Գիտակցելով, որ գաղթը հանգեցնելու է հայոց բնօրրանի մշտնջենական հայազրկմանը, Արամը վճռականապես դեմ արտահայտվեց նահանջին ու գաղթին: Նա նշում էր. «Մենք մի ամբողջ ամիս դիմադրեցինք թուրք բանակին եւ թուրք ու քիւրդ զինուած խուժանին, ունենալով հազիւ հազար կտոր զէնք...Հիմա Վանի պաշտպանութեան համար մենք կարող ենք ունենալ մեր կամաւորական չորս գնդերը, որոնց կռուողների թիւը, հակառակ նրանց կրած կորուստների, երեք հազարի կը հասնի: Վանի եւ Մոկսի ու Շատախի երիտասարդութիւնից կարելի է զինել մէկ կամ երկու հազար հոգի եւս: Ռուսները կարող են անսպառ ռազմամթերք տրամադրել մեզ, ինչպէս նաեւ պարէն: Մեր դէմ գալիք թուրքական ոյժերը շատ չեն կարող լինել, թերեւս մի քիչ աւելի, քան ապրիլեան կռիւներին: Ռուսները չեն կարող թոյլ տալ որ ռազմաճակատը փոխադրուի իրենց սահմաններից ներս: Հաւանաբար շատ չանցած նրանք կրկին պիտի վերադառնան: Մինչեւ ռուսների վերադարձը մենք կարող ենք պաշտպանել այս հայութիւնը, մինչ գաղթը կարող է այս ժողովրդի մէջքը կոտրել»[8]: Դա է պատճառը, որ իմանալով հանդերձ ռուսական բանակի նահանջի մասին նա ուժերի ներածին չափով դեմ կանգնեց գաղթին ու փորձեց կանխել այն և որևէ ծեռնարկ չարեց ազգաբնակչության հավանական գաղթը նախապատրաստելու ուղղությամբ: Եվ դա ոչ թե ժողովրդի հանդեպ անտարբեր լինելու պատճառով, ինչում նրան մեղադրել են դեռևս 1915թ.[9], այլև, ինչպես իրավացիորեն նկատել է Ավ. Հարությունյանը «ժողովուրդի մէջ խուճապ չառաջացնելու նպատակով»[10], որպիսի պայմաններում միայն հնարավոր կլիներ կազմակերպել ժողովրդական դիմադրություն և փրկել հայրենիքը վերահաս կործանումից:

---

[7] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 102, թ. 14:

[8] Սիարոնեան Վարդգէս, Անդրանիկ (Մարդը եւ ռազմիկը), Բոսթըն, 1957, էջ 31-32:

[9] «Վան-Տոսպ», 1915, դեկտեմբերի 20, N 4, էջ 3-4:

[10] «Ազատամարտ»-ի հավելված «Միտք», Երևան, 1993, մայիս, թիւ ե, էջ ժէ:

Նահանջի վերաբերյալ հակասական, բայց, որ էական է, շտապողականություն չթելադրող լուրերի շրջանառության պայմաններում Արամն ընտրեց դիմակայության նախապատրաստության ուղին: Արամին ու նրա նման մտածողներին ճիշտ գնահատելու համար հարկ է նկատի առնել այն իրողությունը, որ թեև հուլիսի սկզբներին գաղթի մասին լուրերը լայն շրջանառություն էին ստացել, այնուամենայնիվ ոչ՝ նահանջին և ոչ էլ՝ գաղթին հավատացող չկար: Ավելին, հերոսամարտից հետո Վանի գործիչներն ինչքան էլ ժողովրդին հորդորում էին չմոռանալ ինքնապաշտպանության մասին, վերջինս ամբողջովին լծվել էր շինարար աշխատանքի ընդհուպ մինչև վերջին օրերը: Ժողովուրդն ամբողջովին կլանված էր հայրենի եզերքի շուտափույթ վերաշինմամբ: Ընդհանուր տրամադրությունն ուներ մեկ այլ կողմ ևս. վասպուրականցիները մտադիր չէին գաղթել և զենք ստանալու դեպքում պատրաստ էին պաշտպանվել. «թող մեզ զէնք եւ ռազմամթերք տրուի, մենք կրնանք պաշտպանել մեզ»[11]: Այս առումով ժողովրդի և Արամի խոհերը զուգադիպում էին, նա հանդես էր գալիս որպես ժողովրդական ձգտումների արտահայտիչ: Գաղթի նախապատրաստումը նշանակելու էր դեմ գնալ ժողովրդական հոսանքին, անվստահություն սերմանել իր և կառավարության հանդեպ, ապակայունացնել ներհայկական մթնոլորտը, ինչը կհանգեցներ դիմադրության անհնարինության և գաղթի անդառնալիության:

Տեսնելով, որ Մոկսին ու Շատախին ինքնապաշտպանական օգնություն կազմակերպելու նպատակով Գր. Բուլղարացու և այլոց ջանքերը արդյունք չեն տալիս, Արամը ժամանակավորապես թողեց կառավարական՝ «մանր-մունր», «ձևական» գործերը և անձամբ լծվեց ինքնապաշտպանական գործի կազմակերպմանը:

1915թ. հուլիսի 14-ին տագնապալի իրավիճակը քննելու միտումով ապրիլյան կռիվների մասնակիցներին, որոնք 1000-ից ավելի էին, նա հրավիրեց Երամյան դպրոցում գումարվելիք ժողովին: Ժողովն անհրաժեշտ գտավ օգնել Մոկսին և Շատախին, որոնց դրությունը ռուսական նահանջով

---

[11] Դարբինեան Ա., էջ 333:

դառնում էր հուսահատական: Սակայն այդ շրջանների վերահաս գաղթը կանխեց ընդունված որոշման կենսագործումը[12]:

Գեներալ Տրուխինի զորամասի նահանջի կապակցությամբ իրենց հետագա դիրքը ճշտելու համար Արամը հարցումով դիմեց Նիկոլևին և ստացավ հավաստիացում, թե Վանը պետք է պահվի[13]: Թեև այս հավաստիացումը Մանազկերտի ճակատում նահանջի վերաբերյալ տեղեկության բացակայության պայմաններում հայ գործիչներին պահում էր անորոշության մեջ նրանք սպասողական պասիվ դիրք չընդունեցին:

Հուլիսի 16-ին իրենց ծանր կացությունը փաստող, նահանջի ուղին բռնած Անդրանիկի և Դրոյի հեռագրերին ծանոթանալուն պես Արամը առաջարկեց նրանց անցնել Վան՝ «միասին պաշտպանելու համար», խոստանալով նաև նյութական աջակցություն[14]: Միաժամանակ պատրաստվում էր նամակ ուղարկել Կովկաս փութացնելու համար Իշխանի կամավորական խմբի ճանապարհումը: Սակայն սկսված նահանջը այդ քայլը դարձրեց ավելորդ: Կարծում ենք տեղին է նշել նաև, որ պատերազմական իրադրության պայմաններում տարօրինակորեն ռազմական հեռագրակայանը չէր աշխատում, այդ պատճառով էլ նա փորձում էր նամակ ուղարկել: Հուլիսի 17-ին Արամը ի պատասխան կատարած հարցումների գեներալ Նիկոլևից քանիցս ստացավ հավաստիացում, որ իրենց կարգադրված է մնալ և միայն թշնամու ճնշման տակ նահանջել[15]: Ասվածից բխում է, որ գոնե դրան հաջորդող մի քանի օրերին հանկարծական նահանջի անհրաժեշտություն չպետք է առաջանար: Այնքան հակասական էին հայ գործիչներին հաղորդվող լուրերը, որ նրանց թվում էր, թե իրենք գոնե մեկ շաբաթ կունենան տեղափոխվելու համար:

Ժողովրդի ճակատագրով մտահոգ Արամը և Վանում գտնվող կամավորական գնդերի հրամանատարները նույն օրը (հուլիսի 17-ին) գրավոր դիմեցին Նիկոլևին՝ խնդրելով իրենց թույլատրել մնալ տեղում և տրամադրել լեռնային հրետանի, անթել հեռագիր և պարենամթերքի ու զինամթերքի այն

---

[12] ՀՀ ՀՔԿՓՊԿԱ, ֆ. 4033, g. 5, գ. 280, թ. 3:
[13] Նույն տեղում, թ. 4-5:
[14] Նույն տեղում, թ. 5:
[15] Նույն տեղում, թ. 6:

մասը, որը ռուսներն ի վիճակի չէին լինելու փոխադրել: Գեներալ Նիկոլաևը, կրկին հաստատելով Վանը չլքելու մտադրության մասին, ավելորդ համարեց հայ գործիչների ցանկությունը՝ փաստորեն մերժելով նրանց դիմումը, սակայն այս անգամ նաև առաջարկեց զգուշության համար կանանց և երեխաներին ճանապարհել Կովկաս, իսկ ռազմունակ տարրերին պահել[16]: Հայոց բռնելիք դիրքը ճշտորոշելու նպատակով համանման բովանդակության հեռագրով Արամը դիմեց նաև գեն. Յուդենիչին, սակայն պատասխան չստացավ[17]: Առաջ անցնելով նշենք, որ միայն այն ժամանակ, երբ Վանը հայաթափվել էր և գաղթականների քարավանը հասել Բերկրի, իսկ պահուստները ոչնչացվել էին, գեն. Տրուխինը չնահանջած կամավորական գնդերին բանավոր առաջարկեց մնալ, սակայն արդեն ուշ էր[18]:

Զուգահեռաբար շարունակվում էր ներքին ուժի զորացման գործընթացը: 1915թ. հուլիսի 17 ին Վանի նահանգապետության անունից հայտարարվեց 17-45 տարեկանների ցուցակագրում իրենց շրջանների ոստիկանատներում[19], այլ կերպ ասած՝ կատարվում էր ուժերի նախնական մոբիլիզացիա հնարավոր բարդությունները հաղթահարելու նպատակով: Նույն օրը Արամի նախաձեռնությամբ կայացավ մի բավական ներկայացուցչական ժողով տեղական գործիչների գերակշիռ մասնակցությամբ[20]: Ժողովականները, որոնց միացել էին նաև կամավորականների առաջնորդներից Վարդանն ու Արմեն Գարոն, նախապես մտադիր էին մնալ տեղում, սակայն երբ հայտնի դարձավ գեն. Նիկոլաևի քաղաքից մեկնելու ցանկությունը, մասամբ փոխեցին իրենց դիրքորոշումը: Այն ենթադրում էր՝ 1) Պատվիրակություն ուղարկել կաթողիկոսի մոտ խնդրելու, որ նա դիմի ցարին՝ նահանջը կանխելու և հայության այդ բեկորը փրկելու համար. 2) Գաղթեցնել միայն ոչ ռազմունակ տարրերին, իսկ ռազմունակ տարրերից ստեղծել ինքնապաշտպանական բռունցք և հայ կամավորների հետ պաշտպանել քաղաքը. 3) Գաղթը կազմակերպելու

---

[16] ՀՀ ՀԲԿՓՊԿԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 280, թ. 6-7:
[17] Նույն տեղում, թ. 7; ՀՀ ՊԿՊԱ ֆ. 57, ց.5, գ. 102, թ. 47:
[18] ՀՀ ՊԿՊԱ,·ֆ. 57, ց.5, գ. 102, թ. 47:
[19] Նույն տեղում, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 129:
[20] «Վան-Տոսպ», 1915, դեկտեմբերի 20, N 4, էջ 4; ՀՀ ՀԲԿՓՊԿԱ, ֆ.4033, ց. 5, գ. 280, թ. 8:

նպատակով ստեղծել համապատասխան հանձաժողով տեղացի երևելի գործիչներից[21]: Հարկ համարվեց նաև ժողովրդին հաղորդել 10-15 օրվա պարենի պատրաստություն տեսնելու մասին և այդպես էլ արվեց:

Մինչ հայ գործիչները ելք էին փնտրում ծանր կացությունից, զինվորական իշխանության կողմից խմբագրվեց և անսպասելիորեն հուլիսի 17-ի գիշերը քաղաքում տարածվեց վերջնագրային բնույթի մի հայտարարություն, որով ժողովրդին ընդամենը երեք օր էր տրվում Բերկրիի կիրճը անցնելու համար[22]:

Հայ գործիչները, առաջին հերթին Արամը, որ ձգտում էին նահանջի մասին հակասական տեղեկություններով ժողովրդին չահաբեկել և հույս ունեին, թե նրան տեղափոխելու համար բավական ժամանակ կունենան, այժմ՝ ռուսական վերջնագրի ճնշման ներքո հարկադրված էին իրենք ժողովրդին գաղթելու անհրաժեշտությունը հասկացնել: Բանն այն է, որ նահանջի մասին շրջանառվող լուրերի պայմաններում էլ մինչև հուլիսի 17-ը բնակչությունը շարունակում էր շինարարական աշխատանքները, գյուղական տարածքների առուծախը: Արամին մնում էր ոչ այլ բան, քան հուլիսի 18-ին ժողովրդին հաղորդել գեն. Նիկոլաևի հրամանը և կարգադրել անմիջապես շարժվել դեպի սահմանագլուխ: Ռուսական վերջնագրային բնույթի հայտարարությունից հետո սկիզբ առավ աննախադեպ խուճապ, որի ընթացքում անեացան «համայնական, կառավարական, կուսակցական, ընկերական», անգամ սեփականատիրական զգացումները: Քաղաքի ռազմունակ տարրերը, որոնք վաղօրոք ընդունած վճռի համաձայն պետք է մնային և դիմադրեին թշնամուն հրաժարվեցին մնալ՝ պատճառաբանելով, որ «ոչ ոք ունին իրենց ընտանիքները փոխադրելու համար»[23]: Անգամ նույն գիշերը նիստ գումարած գաղթը կազմակերպող հանձնաժողովի անդամները լուրն առնելուն պես, նիստի մասնակից Ա. Թերզիբաշյանի հավաստմամբ «ժողովը թողին եւ վազեցին իրենց տուները»[24]: Դեպքերի ժամանակակիցն անտեսելով սույն փաստը Արամին

---

[21] «Վան-Տոսպ», 1915, դեկտեմբերի 20, N 4, էջ 4:

[22] Դարբինեան Ա., էջ 334; Թերզիբաշեան Ա., Անդրանիկ, Փարիզ, 1942, էջ 242; Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 246:

[23] ՀՀ ՀՔԿՓՊԿԱ, ֆ.4033, ց. 5, գ. 280, թ. 9:

[24] Թերզիբաշյան Ա., էջ 242-243:

մեղադրում է գաղթի հրամանը ժողովրդին հաղորդելուց առաջ հանձնաժողովի հետ չխորհրդակցելու մեջ[25]:

Ա.Եկարյանի կարծիքով ևս այդ հայտարարությունից հետո դիմադրության մասին մտածելն ավելորդ էր, ժողովրդին այլևս ոչինչ չէր կարող հետ պահել գաղթից[26]: Սակայն այդ ամենի պատճառ նա համարում էր ՀՅԴ, կամավորական ուժերի և Արամի չկամությունը: Հուլիսի 17-ի խորհրդակցության առիթով նա նշում է, որ մինչ ի տարբերություն Արամի և այլ դաշնակցականների ռուսական կողմի համաձայնության դեպքում կամավորներով Վանում մնալու ցանկություն արտահայտած կամավորականների հրամանատար Վարդանը և մնալու կողմնակից տեղացիները, այդ թվում և ինքը ժողովից հետո սպասում էին ռուսական զորահրամանատարության որոշմանը, գիշերը կառավարության անունից հայտարարվեց գաղթի հրամանը: Այդ բանում էլ հենց նա տեսնում է ՀՅԴ և Արամի չկամությունը[27]: Հուլիսյան գաղթից օրեր անց Արամի Վան վերադարձի առիթով նա քամահրանքով գրում է, թե դա ձևականություն էր, միտված ՀՅԴ գոյությունը շեշտելուն և ավելացնում, որ այն ժամանակ, երբ հարկավոր էր մնալ Վանում և դրա համար կար բավականաչափ ուժ, որի թիվը մի քանի անգամ ավելացնում էր (ըստ նրա կար 8000 կամավորական և 10000-ն էլ պահանջի դեպքում կարող էր տրամադրվել տեղում), դաշնակցությունը վճռեց նահանջել[28]: Գուցեև որոշ թերացումներ եղել են, սակայն իրադարձությունների ամբողջական ուսումնասիրությունից պարզվում է, որ այստեղ նրանց կամեցողության կամ չկամեցողության հարց չի եղել, պարզապես պատերազմական գործողությունների անհաջող ընթացքը բացառել էր դիմադրության հնարավորությունը:

Տարբեր հարցերում Արամի և դաշնակցության քննադատությամբ հանդես եկած ռամկավարներ Ա. Դարբինյանը, Ավ, Թերզիբաշյանը հեռու են Վանի նահանջի և գաղթի հարցում Արամին մեղադրելուց և դրանում տեսնում

---

[25] «Վան-Տոսպ», 1915, դեկտեմբերի 27, N 5, էջ 2:
[26] Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 246-248:
[27] Նույն տեղում, էջ 244-247:
[28] Նույն տեղում, էջ 252:

են ցարիզմի դավերը[29]:

Խորհրդահայ ռազմական պատմաբան Ա.Հարությունյանը անդրադառնալով Արևմտյան Հայաստանի տարածքից ռուսական զորքերի 1915թ. ամառային նահանջին, որի հետևանքով, ինչպես կտեսնենք, արևմտահայությունը կրեց ծանր կորուստներ, մերժում է դրանում ցարական կառավարությանը չար դիտավորության մեջ մեղադրելու տեսակետը: Կովկասյան ճակատի ռազմական գործողությունների վերլուծության հիման վրա նա նահանջի պատճառներ է համարում IV կորպուսի ռազմաճակատի ձգվածությունը, զորքերի ղեկավարման վատ կազմակերպումը, հրամանատարների ապիկարությունը, թույլ հետախուզությունը և ավելացնում, որ զորքերի խելամիտ ղեկավարման, IV կորպուսի բոլոր զորամիավորումների նպատակային օգտագործման և բանակի հրամանատարի ճկուն գործունեության դեպքում աղետից կարելի էր խուսափել[30]:

Ինչևէ, հուլիսի 18-ին Վասպուրականի ավելի քան 150.000 հայությունը ամռան շոգի, թուրք-քրդական մշտական հարձակումների պայմաններում բռնեց հարկադիր գաղթի ուղին դեպի Կովկաս՝ Բերկրի-Աբաղա գծով, և Պարսկաստան՝ Արճակ-Սարայ գծով: Տարբեր վայրերից գաղթող բնակչության պաշտպանությունն իրականացնող Անդրանիկի, Քեռու, Դրոյի և Համազասպի կամավորականների ուժը բավական չէր հսկայական բազմության անվտանգությունը կատարելապես ապահովելու համար: Այդ պատճառով Անդրանիկը դիմեց ռուս գեներալներ Շարպանտյեին և Նիկոլաևին ժողովրդին թշնամուց պաշտպանելու համար Բերկրիում ռուսական զորք թողնելու խնդրանքով, սակայն մերժվեց[31]: Սովից, ծարավից, հյուծվածությունից, հիվանդություններից և թշնամական հարձակումներից ճանապարհին զոհվեց 40.000-50.000 մարդ[32]: Վասպուրականցիներին պատճառվեց ահռելի նյութական վնաս. թշնամուն

---

[29] Դարբինեան Ա., էջ 332-334; Թերզիբաշեան Ա., էջ 242-256:

[30] А. О. Арутюнян, Кавказский фронт 1914-1917гг., Ереван, 1971, стр. 198-199: Հեղինակը նահանջի հեղինակներ է համարում ոչ թե ռուսական կենտրոնական իշխանություններին, այլ գործող զորամիավորումների հրամանատարներին-տես նույն տեղում, էջ 196:

[31] Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, հ. 1, էջ 466-467:

[32] Թերզիբաշեան Ա., էջ 245; Սարգսյան Ե.Ղ., Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Երևան, 1964, էջ283:

թողնվեցին հազարավոր տներ բարեբեր այգիներով, տասնյակ հազարավոր անասուններ, մեծաքանակ պարեն և այլն: Բայց ամենից սարսափելին այն էր, որ կոտորածներից գրեթե փրկված միակ հայկական նահանգը ևս հայազրկվեց. Արևմտյան Հայաստանի ազատագրմանն ուղղված հայոց ջանքերին հասցվեց ծանրագույն, անդառնալի հարված:

Ազգաբնակչության գաղթից տաս օր անց՝ հուլիսի 28-ին, ռուսական բանակի վերջնական հեռացումից հետո միայն, ընդամենը 400 զինյալներով Զեյթեքը մտավ Վան և այնտեղ կարողացավ մնալ չորս օր: Օգոստոսի 2-ին ռուսական զորքերը գրեթե առանց դիմադրության վերագրավեցին Վանը, ապա և ամբողջ Վասպուրականը: Երևանում գտնվող Արամը, օգոստոսի 7-ին գաղթականությանը տեղեկացնելով Վանի վերագրավման մասին, բռնեց վերադարձի ուղին՝ կոչ անելով աշխատունակ և ռազմունակ տարրերին միանալ կամ հետևել իրեն[33]: Օգոստոսի 12-ին նա կրկին Վանում էր և աշխատում էր վերադարձող ազգաբնակչության տեղավորման, կարգ ու կանոնի հաստատման ուղղությամբ: Սակայն մեծագույն զրկանքներից հետո էլ նրան և ժողովրդին տրված չէր երկարորեն մնալ ու շենացնել երկիրը: Զորքերի տեղաշարժերով պայմանավորված մի շարք գաղթ-վերադարձերից հետո օգոստոսի երկրորդ տասնօրյակում Արամը և այլ գործիչներ վերադարձան Կովկաս[34]: Իրադարձությունների ողբերգական ընթացքը ծանր ազդեց նրա վրա: Արամի հետ գաղթի ուղին բռնած Թերզիբաշյանի հաղորդմամբ «անոր ջերմը բռնած էր ու ան ամբողջ մարմնովը կը դողար»[35]: Կարծում ենք ժողովրդի ցավերը իրենը համարող, նրա հանդեպ պատասխանատվություն զգացող գործիչը միայն կարող էր այդպիսի ծանր ապրումներ ունենալ:

Իրադարձությունների վերլուծությունից պարզվում է, որ Արամը, հանդես բերելով ազգային-պետական մտածողություն, հայրենասիրություն՝ հայրենիքն ու ժողովրդին աղետից փրկելու նպատակով ժողովրդին գաղթեցնելու դյուրին գործի փոխարեն ընտրեց դիմադրության կազմակերպման ծանր

---

[33] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 31:

[34] Թերզիբաշեան Ա., էջ 255-256; А. О. Арутюнян, Кавказский фронт 1914-1917гг., Ереван, 1971, стр. 187-188:

[35] Թերզիբաշեան Ա., էջ 255:

և պատասխանատու քայլը: Սակայն ռուսական բանակի IV կորպուսի նահանջը, հատկապես Վանը թողնելու անակնկալ հրամանը անէացրեց նրա և հայրենանվեր մյուս գործիչների ջանքերը:

Վասպուրականահայությանը պատուհասած աղետի մեջ մեղադրել Արամին կամ որևէ այլ գործչի նշանակում է մեղանչել ճշմարտության դեմ:

ՀՅԴ Ամերիկայի կ.կոմիտեին գրած 1915թ. հոկտեմբերի 30-ի նամակում Սիմոն Վրացյանը, տարակուսանք հայտնելով Վանի նահանջի մեջ Արամին հասցեագրված մեղադրանքների առթիվ, նշել է. «Վանի նահանջի մէջ Արամը ոչ մի մեղք չունի...Արամը իր կողմից արաւ եւ անում է այն ամէնը, ինչ որ պայմանները եւ իր ուժերը ներում էին: Արամը մեր օրերի ամենամաքուր, ամենաանկաշառ գործիչներից է եւ բոլոր յարձակումները նրա դէմ անմիտ, թայֆայական զզուելի խնդիրներ են»[36]:

Թերևս Արամի բարձր հատկանիշներն էլ պատճառ դարձան, որ ցարական իշխանությունները ազատեն նրան նահանգապետի պաշտոնից և փոխարենը նշանակեն (1915թ. սեպտեմբերին) օտարի՝ ցարական բանակի փոխգնդապետ Ալֆրեդ Տերմենին[37]:

---

[36] Վրացեան Ս., Հին թղթեր նոր պատմութեան համար, Բէյրութ, 1962, էջ 163-164:
[37] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 242, ց. 1, գ. 102, թ. 34: